Ծուշանիկ Կուրղինյան

Որպես մի մրրիկ խոլ, ահեղամռունչ . . .

Որպես մի մրրիկ խոլ, ահեղամռունչ,
Որ տարերային անհաշտ ցասումով
Փչում է <ռազմի> շեփոր ոգեշունչ,
Մենավոր ուղին ճնշում սոսկումով,
Որպես շառաչը կատաղած ծովի,
Գոռ ալիքների երգը ապստամբ,
Որպես ճարճատող բոցերն հրդեհի,
Ու շանթեր նետող որոտ թուխպ ու ամպ՝
Տիեզերային դժվար երկունքի
Ցավն է գալարվում տիտան արգանդում .
Եվ ողողանջներով գոռ ահազանգի
Սաղմը կաշկանդող կապերը քանդում:
Եվ դաժան, դահիճ սերունդը մարդկան
Ցավի ողողանջից շշմած ու մոլոր՝
Կուզե արգելել ծնունդը մանկան:

1908 թ. 9 մարտի